ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՌԵԺԻՄՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՈՐՈՇԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 120-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության կառավարության ապրիլի 13-ի «Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված արտակարգ դրության ժամկետը երկարաձգելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» որոշմամբ (այսուհետ՝ «Որոշում») նախատեսված միջոցառումների իրականացումը հետևյալ մասերով հայտարարել չեղյալ.

Սանիտարահակահամաճարակային կանոնների խստիվ պահպանմամբ և վերահսկողությամբ՝

- Երևանի մետրոպոլիտենում, ինչպես նաև ավտոբուսներով կանոնավոր ձևով ուղևորափոխադրումների կազմակերպում.
- Շինանյութի, տնտեսական, սպորտային նշանակության իրերի վաճառքի կետերի գործունեության թույլատրում.
- Արհեստագործական նշանակության կետերի վերաբացում.
- Միջմարզային տրանսպորտի գործունեության թույլատրում՝ գյուղատնտեսական և շինարարական աշխատանքների ապահովման նպատակով.
- Մեքենաների տեխնիկական սպասարկման կետերի վերաբացում.
- Ոստիկանության և հաշվառման-քննչական ստորաբաժանումների վերաբացում՝ ոչ լրիվ գրաֆիկով.
- Գույքի գնահատման կազմակերպությունների աշխատանքի թույլատրում.
- Օրթեզավորման կենտրոնների վերաբացում.
- Կահույքագործական աշխատանքների թույլատրում: